ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզական համայնք
Հեռ. ( 0226) 6-17- 97 E:mail : arzakan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 մայիսի 2017 թվականի N 57-Ա

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7)-րդ կետով, հիմք ընդունելով Կոտայքի մարզպետի 2017 թվականի մայիսի 17-ի N 01/15.2/2064-17 գրությունը, համայնքի ղեկավարի տեղակալի 2017 թվականի մայիսի 22-ի N 08 զեկուցագիրը, *որոշում եմ՝*

1.Արզական համայնքի վարչական տարածքում մայիսի 27-ին համայնքային շաբաթօրյակը արդյունավետ կազմակերպելու համար համայնքի վարչական բյուջեից հատկացնել.

1) 04.5.1 <<Արզական համայնք>> գործառական դասակարգման 4264 <<տրանսպորտային նյութեր>> սինթետիկ հաշվից 60000 /վաթսուն հազար/ դրամ դիզելային վառելիք ձեռք բերելու համար:

2) 05.1.1 <<Աղբահանում և սանիտարական մաքրում>> գործառնական դասակարգման 4213 <<կոմունալ ծառայություններ>> սինթետիկ հաշվից 92593 /իննսուներկու հազար հինգ հարյուր իննսուներեք/ դրամ, որից 22593 /քսաներկու հազար հինգ հարյուր իննսուներեք/ դրամ որպես եկամտահարկ:

2. Միջոցառումը անցկացնելու պատասխանատվությունը հանձնարարել համայնքի ղեկավարի տեղակալ Պարույր Խաչատրյանին:

3. Հաշվապահին՝ սահմանված կարգով կատարել վճարում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

*Ն.Մովսեսյան*

22 մայիսի 2017 թվական
գ. Արզական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
## ԱՐԶԱԿԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզական համայնք
Հեռ. (0226) 6-17-97E-mail: arzakan@ yandex. ru

# *ՈՐՈՇՈՒՄ*

23 մայիսի 2017 թվականի N 58 -Ա

### ԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, «ԱՐՄԵՆՏԵԼ» ՓԲԸ-ԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ 07-015-017-011 ԾԱԾԿԱԳՐԻ 0.05 ՀԱ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿԱՊԻ ՇԵՆՔԻ ԲԱԺԱՆՎԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ և 48-րդ կետերով, հիմք ընդունելով Արզական համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 24-ի N 49-Ն որոշումը,* և «ԱՐՄԵՆՏԵԼ» ՓԲԸ-ի տնօրենի *դիմումը՝ շինություններին հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ՝***

1. «ԱՐՄԵՆՏԵԼ» ՓԲԸ-ԻՆ պատկանող 07-015-017-011 ծածկագրի 0,05 հա հողամասում գտնվող կապի շենքի բաժանված՝
   1) 196.6քմ միավորը հասցեավորել <<գ.Արզական, Սարալանջի փողոց 3/1>> հասցեով՝ համաձայն հատակագծի:
   2) 5.5քմ միավորը հասցեավորել <<գ.Արզական, Սարալանջի փողոց 3/2>> հասցեով՝ համաձայն հատակագծի:
2. «ԱՐՄԵՆՏԵԼ» ՓԲԸ-ից համայնքի բյուջե գանձել 2000 / երկու հազար/ դրամ (յուրաքանչյուր բաժանված միավորի համար՝ մեկ հազար դրամ) հասցեի տրամադրման համար տեղական վճար:
3. Սույն որոշմամբ ծագող իրավունքներն ենթակա են պետական գրանցման ԱԳԿՊԿ Մարզերի միավորված ստորաբաժանումում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

*Ն. Մովսեսյան*

23 մայիսի 2017 թվական
գ. Արզական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐԶԱԿԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզական համայնք
Հեռ. (0226) 6-17-97E-mail: arzakan@ yandex. ru

# *ՈՐՈՇՈՒՄ*

23 մայիսի 2017 թվականի N 59 -Ա

## ԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՍՈՒՍԱՆՆԱ ՍՈՒՐԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ 07-015-0050-0052 ԾԱԾԿԱԳՐԻ ԵՎ 07-015-0050-0054 ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՄԻԱՎՈՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ և 48-րդ կետերով, հիմք ընդունելով Արզական համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 24-ի N 49-Ն որոշումը, և Սուսաննա Խաչատրյանի դիմումը՝ միավորված հողամասին հասցե տրամադրելու մասին, որոշում եմ՝*

1. Սուսաննա Սուրիկի Խաչատրյանին պատկանող 07-015-0050-0052 ծածկագրի գ. Արզական Բջնիի խճուղի 8/2 հասցեի և 07-015-0050-0054 ծածկագրի գ. Արզական, Բջնիի խճուղի 10/1 հասցեի հողամասերի միավորված հողամասը հասցեավորել <<գ.Արզական, Բջնիի խճուղի 8/2-10/1>> հասցեով:
2. Սուսաննա Խաչատրյանից համայնքի բյուջե գանձել 1000 / մեկ հազար/ դրամ՝ հասցեի տրամադրման համար տեղական վճար:
3. Սույն որոշմամբ ծագող իրավունքներն ենթակա են պետական գրանցման ԱԳԿՊԿ Մարզերի միավորված ստորաբաժանումում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

23 մայիսի 2017 թվական
գ. Արզական

*Ն. Մովսեսյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզական համայնք
Հեռ. ( 0226) 6-17- 97 E:mail : arzakan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 մայիսի 2017 թվականի N 60–Ա

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ <<ԱՅԼ ՆՊԱՍՏՆԵՐ>> 4729 ՀՈԴՎԱԾԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի առաջին մասի 2)-րդ կետով, հիմք ընդունելով քաղաքացիների դիմումները, ***որոշում եմ՝***

1. Արզական համայնքի 2017 թվականի վարչական բյուջեի 1071 «Սոց.հատուկ արտոնություններ» գործառական դասակարգման «Այլ նպաստներ» 4729 սինթետիկ հաշվից հատկացնել 100000 /մեկ հարյուր հազար / դրամ, որպես օգնություն՝

| | |
|---|---|
| Խորեն Հովհաննիսյան | 20000 /քսան հազար/ |
| Վարդան Հովհաննիսյան | 20000 /քսան հազար/ |
| Հայկ Ենգիբարյան | 20000 /քսան հազար/ |
| Լյուդվիգ Հարությունյան | 20000 /քսան հազար/ |
| Արմեն Ենգիբարյան | 20000 /քսան հազար/ |

2. Հաշվապահին՝ սահմանված կարգով կատարել օգնության վճարում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

*Ն. Մովսեսյան*

25 մայիսի 2017 թվական
գ. Արզական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզական համայնք
Հեռ. ( 0226) 6-17- 97 E:mail : arzakan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**30 մայիսի 2017 թվականի N 61–Ա**

## ՔԱՂԱՔԱՑԻ ՀԵՆՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՀԵՏ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 06-ԻՆ ԿՆՔՎԱԾ 1.15 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով քաղաքացի Հենրիկ Մկրտչյանի դիմումը՝ հողամասի վարձակալության պայմանագիրը լուծելու մասին, **որոշում եմ՝**

1. Լուծել 2001 թվականի նոյեմբերի 06 -ին Հենրիկ Մկրտչյանի հետ կնքված 1.15 հա վարելահողի վարձակալության պայմանագիրը:
2. Սույն որոշմամբ ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ԱԳԿՊԿ Կոտայքի մարզային ստորաբաժանումում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

*Ն. Մովսեսյան*

30 մայիսի 2017 թվական
գ. Արզական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզական համայնք
Հեռ. (0226) 6-17-97E-mail: arzakan@ yandex. ru

# ՈՐՈՇՈՒՄ

30 մայիսի 2017 թվականի N 62-Ա

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ /ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ/ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6)-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման դրույթներով, որոշում եմ՝

1. Տալ Կոտայքի մարզպետարանին գ.Արզական, Հ.Բաբաջանյան 5 հասցեում գտնվող համայնքի մշակույթի տան վերանորոգման /արտաքին դռների և պատուհանների փոխում/ թույլտվություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

*Ն. Մովսեսյան*

30 մայիսի 2017 թվական
գ. Արզական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզական համայնք
Հեռ. (0226) 6-17-97 E-mail: arzakan@ yandex. ru

# *ՈՐՈՇՈՒՄ*

01 հունիսի 2017 թվականի N 63-Ա

## ՍԻՐՈՒՇ ԱՏՈՄԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, նկատի ունենալով, որ Սիրուշ Գևորգյանին պատկանող հողամասից կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, չի ընդգրկված ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության, ինչպես նաև հնագիտական պատմամշակութային հողերի պահպանման գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտ, և այդ հողամասում ինքնակամ կառուցված շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, հիմք ընդունելով Սիրուշ Գևորգյանի դիմումը **որոշում եմ**՝*

1. Ճանաչել Սիրուշ Ատոմի Գևորգյանի սեփականության իրավունքը գ. Արզական, Ե. Չարենցի փողոց 2-րդ փակուղի 1 հասցեում գտնվող, ըստ կադաստրային քարտեզագրման արդյունքների 07-015-0018-0013 կադաստրային ծածկագրով փաստացի օգտագործվող 0.10272 հա մակերեսով տնամերձ հողամասի նկատմամբ, որը փաստացի նրա կողմից օգտագործվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:
2. Ճանաչել օրինական Սիրուշ Ատոմի Գևորգյանի կողմից 1945թվականին ինքնակամ կառուցված 32.46քմ արտաքին մակերեսով շինությունը /բնակելի տուն/:
3. Սույն որոշմամբ ծագող իրավունքները ենթակա են գրանցման ԱԳԿՊԿ Մարզերի միավորված ստորաբաժանումում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

*Ն. Մովսեսյան*

01 հունիսի 2017 թվական
գ. Արզական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզական համայնք
Հեռ. (0226) 6-17-97 E-mail: arzakan@ yandex. ru

# *Ո Ր Ո Շ Ու Մ*

**01 հունիսի 2017 թվականի N 64 -Ա**

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի ԹԻՎ 2 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ 3-րդ և 5-րդ մասերով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով,* ***որոշում եմ՝***

1.Կոտայքի մարզի Արզական համայնքի ղեկավարի 2007 թվականի հունվարի 18-ի «Արզականի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» N 2 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) որոշմամբ հաստատված N6 հավելվածի 11-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «ժ¹» ենթակետով.

<<ժ¹) իրականացնում է համայնքի ղեկավարի աշխատակազմի հաշվապահական գործունեությունը>>:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

***Ն.Մովսեսյան***

01 հունիսի 2017 թվական
գ. Արզական